

ՎՈԶԻԼՆԵՐԸ Վ.ՏԱՆԳԱՎՈՐ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ ԵՆ

Գիլը 10 ԿՈՎ.

ՀԱՅՊԵՏԱՐԱՑ  
ԿՐԵՎԱՆ

1940

616

Դ-42

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ  
ՎՈԶԽԻՆԵՐԸ Վ.ՏԱ.ՆԴԱՎՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆՆԵՐ ԵՆ

Վոչիլները փոխանցում են բծավոր ու հետա-  
ղաքած տիֆերի վարակ: Կծելով հիվանդին, վոչիլը  
ծծում է նրա արյունը, վորի մեջ հիվանդության  
հարուցիչներ են գտնվում: Հետո անցնելով առողջ  
մարդու վրա, վոչիլը կծում է նրան ու վարակը փո-  
խանցում:

Անմաքրասեր մարդու վրա կարող են ապրել յե-  
րեք տեսակի վոչիլներ. դիմի, շորի և ցայլի (տա-  
փակոջիլ): Շորի վոչիլը սովորաբար ապրում է սպի-  
տակելնի կամ հաղուստի ծալքերում: Որական  
5—6 անգամ նա սողում է մարդու մարմնի վրա ա-  
րյուն ծծելու համար: Վոչիլն ածելով իր ճիշերը (ա-  
նիժները), նրանց ամրացնում է սպիտակեղենի կամ  
հաղուստի գործվածքի թելիկներին, դիմավորապես  
կարերի և ծալքերի մեջ:

Գիշի վոչիլն ապրում է մարմնի մազոտ մասե-  
րում, դիմավորապես դիմին, բայց կարող է ապրել  
նաև կրծքի մազերի մեջ և կռնատակի փոսերում: Իր  
ճիշերը նա ամրացնում է մազի վրա, նրա հենց հիմ-  
քի մոտ, վորտեղ ամենից ավելի տաք է: Գիմի և շո-  
րի վոչիլները տեսազով նման են իրար, նրանք բարձ-  
րանին դյուրաշարժ են և մեկ մարդուց մյուսին անց-  
նելը նկատվում է վոչիլների յերկու տեսակի մեջ  
ևս: Իրար նման են նաև նրանց սնումը, դիմի վոչիլը  
նույնպես որական մի քանի անգամ արյուն է ծծում:  
Անիժներից, նայած չերմաստիճանին, 4—15 որ անց  
դուրս են գալիք թրթուրներ, վորոնը 15—18 որից  
հետո հասունանում են և կարող են իրենց հերթին  
ճիշեր ածել: Վոչիլը միջին հաշվով ապրում է 35 որ:  
Վոչիլներն իրենց ավելի լավ են զդում 30—32 աս-  
տիճան չերմության մեջ: Զերմաստիճանը մինչև

39—40 բարձրանալու դեմքում (հիվանդների մոտ)՝  
վոչիլներն անցնում են արտաքին հագուստի վրա,  
իսկ այստեղից կարող են անցնել ուրիշ մարդկանց:  
Վոչիլուսության դեմ պայքարի լավագույն միջոցը  
հանդիսանում է սանանցաթողով, (սանալրոպուսկներկ)  
այսինքն հատուկ բաղանիքով անցնելը, վորտեղ լո-  
ղանալու ժամանակ լողացողների հագուստը վոչիլ-  
ության դեմ կամ կամ ասավնանավթային խառ-  
նուրդով կամ թե մազերը խուզում են № 0 և 1 մե-  
քենայով: Անցնելով սանանցաթողը, մարդ լիովին  
ազատվում է վոչիլներից:

Յեթե սանանցաթողով անցնելու հնարավորու-  
թյուն չկա, հարկավոր ե տանը միջոցներ ձեռք տո-  
նել վոչիլներին վոչիլացնելու համար:

Լավագույն միջոցը հանդիսանում է մազերը  
№ 0 և 1 մեքենայով կարճ խուզելը: Այդ միջոցն ան-  
պայման պետք ե զործադրել տղամարդկանց և յերե-  
խաների նկատմամբ: Վոչիլներին վոչիլացնելու հա-  
մար դեռահաս աղջիկների և կանանց մազերն արմա-  
տի մոտ թրծում են նավթով: Թրջելուց հետո 1/2  
ժամով զլուխը պետք ե ոլինդ կապել թաշկինակով:  
1/2 ժամից հետո զլուխը լվանում են տաք ջրով ա-  
ռանց սապոնի, մոխրաջրով: Գլուխը լվանալուց հե-  
տո, ամբողջ մարմինը պետք ե լավ լվանալ տաք ջր-  
ով, սապոնով ու մաչալկայով: Լողանալուց հետո  
պետք ե հազնել մաքուր սպիտակեղեն ու մաքուր հա-  
գուստ:

Բոլոր վոչիլում կարելի լիքանալ, վորպիսիք կարելի յե-  
լվանալ, թրջում են մոխրաջրով: Սպիտակեղենը լը-  
գանալու ժամանակ անպայման պետք ե յեռացնել  
1/2 ժամից վոչ պակաս (յեռալու սկզբից), վորպիսիք  
բոլոր իրերը լավ տաքանան և նրանց մեջ յեղած վո-  
չիլներն ու անիժները վոչիլացնան: Այն իրերը, վոր-

աղիսիք չի կարելի յեռացնել — խունացով, բամբակե, թափիկարած և վերնազդեստը՝ արդուկում են տաք արդուկով թաց շորի վրայով։ Արդուկը պետք է շատ տաք լինի, վորապեազի թաց շորից գոլորշի գոյանա։

Մուշտակե իրերի մեջ վոջիներին վոչնչացնում են թոնիրներում։ Դրա համար շուռ տված մուշտակե իրերը կախում են թոնիրի մեջ (հաց թխմլուց հետո, յերբ կրակը նստում է), վաթաթելով այն լազ քամած շորով, թոնիրը ծածկում և թողնում են այս տեղ մինչև վերջինս սառչի։ Թոնիրից հանելով հագուստը լավ թափ են տալիս ծեծելով ու մաքրում, սատկած վոջիներին հեռացնելու համար։ Մուշտակե իրերը խոնավ չպետք է լինեն, վորովհետեւ խոնավ մուշտակը և կաշին տաքությունից փչանում են։ Չոր իրերն առանց վնասվելու դիմանում են այդպիսի մը շակման։

Վոջիների յերեան գալը թույլ չտալու համար հարկավոր ե վոչ ուշ, քան շաբաթը մեկ անգամ լուղանալ տաք ջրով, ընդվորում անպայման լվանալ և գլուխը։ Տաճը կամ բաղանիքում լողանալուց հետո պետք է փոխել թե հագնելու և թե անկողնի սպիտակեղենը, իսկ կեղտոտը՝ լվանալ ու յեռացնել։ Վերելի իրերը և անկողինը (ներքնակը) պետք է հաճախ (ամսական 3—4 անգամից վոչ պակաս) ողափոխել և ծեծելով թափ տալ գուրսը։

Կատարելով այս, կարելի յեր բոլորովին աղատվել վոջիներից։

Պետք է հիշել, վոր սլայքարը վոջիների դեմ — այդ պայքարը և առողջ, կուլտուրական կյանքի համար։

Թարգմ. Ավ. Շաթիրյան Պատ. խմբ. բժ. Ս. Մկրտչյան

Տեխ. խմբ. Ի. Գարդանյան. Սրբագրիչ՝ Ա.

Գևագիտի լիազոր՝ Բ-1136. Պատվեր 351.

Հայպետհրատի տպարան, Երևան

«Ազգային գրադարան»



NL0279508